

ՀՏԴ՝ 81.3

DOI: 10.52971/18294316-2024.27.2-94

ԳՈՒՆԱՅԻՆ ՄԱԿԴԻՐՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ «ԵՐԿԻՐ ՆԱԻՐԻ» ԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ՈՒՂՂԻՉ ՏՆԻՑ»  
ԱՐՁԱԿ ԳՈՐԾԵՐՈՒՄ

*Փայանե Հ. Ավետիսյան*

Շիրակի Մ. Նալբանդյանի անվ. պետական համալսարան, Գյումրի, ՀՀ

**Ամփոփում**

Նախաբան. Եղիշե Չարենցն ընդլայնեց գեղարվեստական պատկերավորման մտածողությունը՝ համադրելով հայ և համաշխարհային գրականության ավանդները: Թարմացրեց և նոր շունչ հաղորդեց գեղարվեստական մտածողությանը, հղկեց գրականության լեզուն, նորոգեց պատկերային կազմը, տաղաչափությունը: Եղիշե Չարենցի պատկերավորման համակարգում մեծ տեղ զբաղեցնող գունային մակդիրների կիրառությունը խոսքի գեղարվեստականությունն ապահովող պատկերավորման հզոր միջոց է: Մեթոդներ և նյութեր. Ուսումնասիրության ընթացքում կիրառել ենք համալիր քննության, վերլուծության և համադրման մեթոդները: Քննության ենք առել գունային մակդիրների պատկերավորման առանձնահատկությունները նորագույն շրջանի գրականության կարևորագույն դեմքերից մեկի՝ Եղ. Չարենցի արձակ գործերում՝ փորձելով բացահայտել նրա գեղարվեստական արձակ խոսքի ընդգրկուն, գեղեցիկ ու արտահայտիչ լինելը ոչ թե սոսկ բառերի քանակով պայմանավորված, այլ նրանց տեղին գործածությամբ: Վերլուծություն. Գունային մակդիրները ներկայացվում են ըստ կազմության (առանձնացվում են պարզ, բարդ մակդիրները՝ բարդության տեսակներով, ինչպես՝ մետաղագույն, ոսկենկար), ըստ գործածության՝ կրկնություններ, բազմակի գործածություններ, հոմանիշներ, բերվում են նաև Չարենցի լեզվին բնորոշ մակդիրային որոշ կապակցություններ, ինչպես՝ կարմիր քուրա, կարմրակեզ հուր: Չարենցյան արձակում առանձնահատուկ տեղ գրավող մակդիրների գործածությամբ ընթերցողի ուշադրությունը սևեղվում է ընդգծված հատկանիշի վրա՝ առաջ բերելով նկարագրվող երևույթի կենդանի պատկերը: Արդյունքներ. Քննարկվող թեման արդիական և հետաքրքիր է ինչպես բա-

նաստեղծի, այնպես էլ արևելահայ գրական լեզվի գեղարվեստական տարբերակի ոճական հնարավորությունների քննարկման տեսակետից՝ այն առումով, որ Ե. Չարենցի չափածոյի լեզվաոճական առանձնահատկությունները ուսումնասիրված են, իսկ արձակի վերաբերյալ ամբողջական ուսումնասիրություն չկա:

**Բանալի բառեր՝** գունային մակդիրներ, ոճական ինքնատիպություն, փոխաբերական մակդիրներ, պատկերավորություն, արտահայտչականություն, հոգեվիճակ, տրամադրություն, գեղարվեստական խոսք:

**Ինչպես հղել՝** Ավետիսյան Գ. Գունային մակդիրների գործածությունը Եղիշե Չարենցի «Երկիր Նաիրի» և «Երևանի ուղղիչ տնից» արձակ գործերում. // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի: 2024: Հ.2(27): 94-102 էջեր:

DOI: 10.52971/18294316-2024.27.2-94

## THE USE OF COLOR ADVERBS IN THE PROSE WORKS OF YEGHISHE CHARENTS “THE LAND OF NAIRI” AND “FROM THE CORRECTIONAL HOUSE OF YEREVAN”

*Gayane H. Avetisyan*

Shirak State University after M. Nalbandyan, Gyumri, RA

### Abstract

**Introduction:** Yeghishe Charents expanded the thinking of artistic depiction by combining the contributions of Armenian and world literature. He refreshed and gave a new breath to artistic thinking, refined the language of literature, renewed the visual composition, the prosody. The use of color adverbs, which occupy a large place in Yeghishe Charents' system of imagery, is a powerful means of imagery that ensures the artistry of speech. **Methods and materials:** During the study, we used the methods of complex examination, analysis and comparison. We examined the characteristics of the depiction of color adverbs of one of the most important figures of the modern period, Yegh. Charents, in the prose works trying to reveal the comprehensive, beautiful and expressive nature of his artistic prose speech not only due to the number of words, but due to their appropriate use. **Analysis:** Color adverbs are presented according to composition (simple and complex adverbs are distinguished by types of complexity, such as metal-colored, gold-colored), according to usage: repetitions, multiple usages, synonyms, some adverbial connections characteristic of the Charents language are also presented, such as red kura, karmrakez hurray. With the use of adverbs that occupy a special place in Charents's prose, the reader's attention is drawn to the highlighted feature, bringing forth a vivid image of the described phenomenon. **Results:** The topic under discussion is current and interesting both from the point of view of discussing the stylistic possibilities of the poet and the artistic version of the Eastern Armenian literary language in the sense that the linguistic and stylistic features of Charents verse have been studied, and there is no complete study of prose.

**Key words:** color adverbs, stylistic originality, figurative adverbs, imagery, expressiveness, state of mind, mood, literary speech.

**Citation:** Avetisyan G. *The Use of Color Adverbs in the Prose Works of Yeghishe Charents "The Land of Nairi" and "From the Correctional House of Yerevan"*. // "Scientific works" of SCAS NAS RA. Gyumri, 2024. V. 2(27). 94-102 pp.. DOI: 10.52971/18294316-2024.27.2-94

**ИСПОЛЬЗОВАНИЕ ЦВЕТОВЫХ НАРЕЧИЙ В ПРОЗАХ ЕГИШЕ  
ЧАРЕНЦА «ЗЕМЛЯ НАИРИ» и «ИЗ ЕРЕВАНСКОГО  
ИСПРАВИТЕЛЬНОГО ДОМА»**

*Գայանե Օ. Ավետիսյան*

Ширакский государственный университет им. М. Налбандяна, Гюмри, РА

**Аннотация**

**Введение:** Егише Чаренц расширил представление о художественном изображении, объединив вклады армянской и мировой литературы. Он освежил и дал новое дыхание художественному мышлению, усовершенствовал язык литературы, обновил живописную композицию, планировку. Употребление цветочных наречий, занимающих большое место в образной системе поэзии Егише Чаренца, является мощным образным средством визуализации.

**Методы и материалы:** В ходе исследования мы использовали методы комплексного рассмотрения, анализа и сравнения. Мы рассмотрели особенности изображения цветочных наречий одного из важнейших деятелей нового времени. В прозаических произведениях Чаренца пытаются раскрыть всесторонность, красоту и выразительность своей художественной прозаической речи не только за счёт количества слов, но и благодаря их уместному употреблению. **Анализ:** Цветочные наречия представлены по составу (простые и сложные наречия различаются по типам сложности, например металлизированный, золотистый), по употреблению: представлены повторы, многократное употребление, синонимы, некоторые наречия, характерные для чаренцовского языка. Также представлены, например красная кура, кармакез ура. С помощью наречий, занимающих особое место в прозе Чаренца, внимание читателя обращается на выделенный признак, создавая яркий образ описываемого явления.

**Результаты:** Обсуждаемая тема актуальна и интересна как с точки зрения поэта, так и с точки зрения обсуждения стилистических возможностей художественной версии восточно-армянского литературного языка в том смысле, что лингвистические и стилистические особенности стиха Е. Чаренца изучены, но полного изучения прозы нет.

**Ключевые слова:** цветочные наречия, стилистическое своеобразие, образные наречия, образность, выразительность, душевное состояние, настроение, художественная речь.

**Как цитировать:** Аветиսյան Գ. *Использование цветочных наречий в прозе Егише Чаренца: «Земля Наири» и «Из Ереванского исправительного дома».* // "Научные труды" ШЦАИ НАН РА. Гюмри, 2024. Т. 2 (27). 94-102 сс. DOI: 10.52971/18294316-2024.27.2-94

**ՆԱԽԱԲԱՆ.** Հոդվածում նպատակ է հետապնդվում քննել Ե.Չարենցի արձակ գործերում գունային մակդիրների կիրառությունը, որոնց պատկերավորությունը գեղարվեստական խոսքում հիմնավորել ենք մեջբերվող բնագրային օրինակներով:

20-րդ դարասկզբի հայ նորագույն գրականության մեջ Եղիշե Չարենցն իր արձակ գործերում լեզվական և ոճական զանազան հնարանների գործածության շնորհիվ խոր ազդեցություն է թողել հայ գրական լեզվի զարգացման հետագա ընթացքի վրա: Պատկերավորությունը նրա գեղարվեստական խոսքի ամենաբնորոշ կողմն է, նրա լեզվի հիմնական առանձնահատկությունը: Պատկերավորման արտահայտչական միջոցների օգնությամբ գրողը ոչ միայն իրական և շոշափելի է դարձնում մտքի առարկան, այլև նկարագրվող երևույթը դարձնում է վառ ու տպավորիչ, ուժեղացնում գեղարվեստ-

տական խոսքի հուզական ներգործությունը [1, էջ 152]: Չարենցյան արձակում շատ ենք հանդիպում միննույն մակդիրի տարբեր գործածությունների, որոնք տարբեր համադրություններով արտահայտում են տարբեր իմաստներ: Այս առումով Պ.Մևակը տեղին է բնութագրում. «Չգու՛մ ես բառի կշիռն ու արժեքը, բառի գույնն ու լռությունը» [10, էջ 47]:

**ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹՅՈՒՆ.** Մակդիրը առարկան կամ երևույթը գեղագիտորեն բնութագրող որոշիչ է, որը որոշակի տեղ ունի նախադասության կառուցվածքում: Այն առանձնահատուկ ձևով բնորոշում է առարկան, երևույթը, գործողությունը, վերստեղծում նկարագրվող իրողության տեսանելի պատկերը, միաժամանակ արտահայտում խոսողի վերաբերմունքն ու գնահատականը [4, էջ 44]: Այսպես՝

Քաղաքի արևմտյան մասում, վերը, ժայռակուռ, դեղին բլուրի վրա բազմել էր Բերդը [7, էջ 13]:

Վարը-քաղաքն է երևի. առկայծում են դեղին, տարտամ կրակներ [7, էջ 20]:

Միջահասակ է, լայնաթիկունք. չիլ այտեր ունի, դեղին մորուք [7, էջ 140]:

Բերված օրինակներում դեղին մակդիրի միջոցով բանաստեղծը նկարագրվող առարկաները բնորոշում է բոլորովին նոր գծերով, նոր հատկություններով:

Եղ. Չարենցն իր արձակ գործերում խոսքն ավելի արտահայտիչ ու թարմ դարձնելու նպատակով մի գոյականի համար հատկանշական մակդիրը գործածում է տարբեր գոյականների հետ՝ կարևորելով տվյալ ստեղծագործության գաղափարական առաջնահերթությունը, բովանդակությունը, ոճական առանձնահատկությունը: Օրինակ՝

Իջել է, իջել է, որպես կարմիր ամոթ ... [7, էջ 27]:

Նրանից է ստացել առաջին անգամ ընկեր Վառողյանը և հեղափոխական ընդվզումի կարմիր ավետարանը - «Ամբոխային տրամաբանությունը» [7, էջ 81]:

Արձակ ստեղծագործություններում Չարենցն աշխատում է նույն գոյականը բնութագրել տարբեր ու բազմազան հատկանիշներով, գտնել այդ գոյականների այնպիսի նոր հատկանիշներ, որոնք կընդգծեն պատկերավորությունն ու խոսքին կհաղորդեն արտահայտչական նուրբ իմաստ:

Օրինակ՝ Դա մի գյուղական արտաքինով երիտասարդ էր. հիվանդոտ, դեղին դեմք ուներ ու շուտ-շուտ թարթվող աչքեր [7, էջ 214]:

Իսկ մյուս կողմից-բռնություն, մղձավանջ, դեղին ստրկություն [7, էջ 27]:

Գրողը բերված օրինակներում դեղին մակդիրը գործածում է դեմք գոյականի հետ, որն արտահայտում է նրա գունատ, հիվանդոտ լինելը: Իսկ ստրկություն բառի հետ գործածելիս նկատի ունի ոչ միայն առարկայի հատկանիշը, այլև հատկանիշի որակային չափը՝ անգույն, ճնշող, տրտում, անհրապույր և այլն:

«Երկիր Նաիրի» և «Երևանի ուղղիչ տնից» արձակ ստեղծագործություններում հանդիպում ենք նաև նույն գոյականի հետ գործածվող տարբեր մակդիրների, որոնք առարկան, երևույթը բնութագրում են տարբեր կողմերից՝ թարմություն և բազմազանություն հաղորդելով գեղարվեստական խոսքին:

Այսպես՝ Հիսունին մոտիկ, բարձրահասակ, լիքը, մետաղագույն դեմքով - իսկական նաիրյան «մատրյոնա» էր Մարգարիտը [7, էջ 246]:

Երիտասարդ Է. դեղին հրեական դեմքով, միջահասակ, հագին կապույտ շկուտե բլուզ, գլխին արախչին [7, էջ 227]:

Չարենցը գործածում է մեկ բառի համար տարբեր հոմանիշներ՝ խուսափելով անհարկի կրկնությունից, արտահայտելով իմաստային նրբերանգների բազմազանություն: Օրինակ՝ Թուխ դեմքով, բարակ բարձրահասակ մի աղջիկ էր նա, այդ Մանիշակը [7, էջ 274]:

Սև ֆունի վրա ոսկեգօծ տառերով գրված է [7, էջ 49]:

Սսեղ, թել, կողպեք, սպիտակ հավա... [7, էջ 149]:

Ճերմակ ցուր դարձավ կարմիր ցուր-էլավ գնաց... [7, էջ 306]:

Հոմանիշ կամ նույնանիշ բառերից կազմված մակդիրների գործածությունը ևս չարենցյան ոճական հնարանք է, որն ուժեղացնում է նշված հատկանիշը, ինչպես՝

Սև, մրուրոտ, արյունալի են այդ դեպքերը [7, էջ 170]:

Հաճախակի են հանդիպում նաև նույն արմատով կազմված հոմանիշ մակդիրները. Երբեմն էլ ես տեսնում եմ նրան... հորս, Աբգար աղայի դեղնած, դեղնափայլ... մազերում [7, էջ 9]:

Չարենցյան արձակ ստեղծագործություններում շատ են կազմությամբ բարդ գունային մակդիրները, որոնք բնութագրում են առարկան, ոճական տեսակետից արտահայտում են գրողի հույզերն ու տրամադրությունները: Օրինակ՝

Եթե ցերեկ լիներ՝ կտեսնեին դեղին կտավի վրա-Երկգլխանի մի արծիվ՝ ոսկե-նկար զարզանդ [7, էջ 20]:

Լեզվաոճական հատուկ հնարանք է նաև կրկնավոր բարդությունների միջոցով ներկայացվող գունային մակդիրների գործածությունը: Այս դեպքում ընդգծվում է բառի հուզականությունը, ինչը խոսքին հաղորդում է որոշակի ռիթմիկություն, ինչպես՝

Գետափին, սառույցի վրա միլիցիան գտել էր արյան կարմիր-կարմիր, քստմնելի հետքեր... [7, էջ 20]:

Կարծում ենք ավելորդ է վերստին հիշատակել և այն ճակատագրական դասը, որ իր հերոսական կոնակի վրա, «Ամպոլի» կապույտ-կապույտ հետքերի ձևով, ստացել է ընկեր Վառոդյանը «Դառնության կենտրոնից» [7, էջ 81]:

Չարենցի գործածած գունային մակդիրները խոսքը դարձնում են տպավորիչ և հուզական: Այդ մակդիրային կիրառությունները երբեմն աստիճանավորման, երբեմն թվարկման նշանակություն են ստանում: Օրինակներ՝

Պատերից անդին, հեռուն Երևանի գորշ բլուրներն են, որոնք երեկոները դառնում են կարմիր, պղնձագույն... [7, էջ 212]:

Ձյուն, խրճիթ, խրճիթի առաջ՝ խարույկ, պատուհանում դեղին լույս, վերև՝ ամպոտ երկինք, ամպերի միջից՝ սպիտակ, քիչ դեղնավուն լուսինը [7, էջ 228]:

Չարենցյան արձակում հանդիպող մակդիրների մեծագույն մասը փոխաբերաբար գործածություններ են, ինչը խոսքը դարձնում է ավելի արտահայտիչ ու գեղեցիկ: Ըստ Հ. Հարությունյանի՝ փոխաբերության դեպքում երևույթների, հատկանիշների նմանության հիմքի վրա մի բառի փոխարեն գործածվում է մի այլ բառ, որը թելադրում է բանիմաստի նրբերանգների զգացողություն, բառօգտագործման ճաշակ [5, էջ 140]:

Դրանցից և ոչ մեկը մի սև «խաչհամբույր» գցած չուներ դեռևս սուրբ Աստվածածնի գանձատուփը [7, էջ 120]:

Ոչ թե «երգիծանք» է դա, այլ անձնական զարհուրելի ռիսի, դեղին վրեժի արտահայտություն [7, էջ 70]:

Գունային մակդիրի բառային ազդեցությունն ավելի է մեծանում, երբ հանդիպում ենք նաև հարադիր բարդությունների տեսքով հանդես կառույցների կիրառության: Այս դեպքում ավելի է մեծանում և ամբողջանում նկարագրվող առարկայի էությունը, ընդարձակվում բառի ծավալն ու սահմանները.

Օուխը լցվել էր արդեն քաղաքը, և մոտենում էին արդեն քաղաքի ծխախեղդ մարմնին ահավոր հրդեհի սլ-կարմիր բոցերը [7, էջ 182]:

Գունատ, հիվանդոտ դեմքի վրա բաց-կապտավուն աչքերը վախկոտ են ու խեղճ [7, էջ 227]:

Ինչպես նշում է Ա. Մարությանը, Եղիշե Չարենցը իր գեղարվեստական արձակ խոսքում հաճախ է գործածում հետադաս մակդիրներ, որոնք խոսքին հուզաարտահայտչական լիցք հաղորդելուց բացի, ոճական յուրահատուկ երանգ են ստեղծում՝ հեղինակին նմանեցնելով մեր միջնադարյան տաղերգուներին [5, էջ 143].

Թեյը, դեղին, պարզ, հորանջում է ապակյա բաժակներում [7, էջ 50]:

Հետաքրքիր և ինքնատիպ միջավայր են ստեղծում Չարենցի կողմից գործածված այն հատուկ անունները, որոնց մի բաղադրիչը այնպիսի հատկանիշների մասին է, որոնք խիստ բնորոշող են և խոսքի պատկերավորությունը մեծացնող գեղարվեստական հնարանք: Օրինակ՝

Վերջերս Գեներալ Ալոշը մի տեսակ «ծուռ» աչքով էր նայում Օլգա Վասիլևնային-Շիկահեր Դդումին [7, էջ 60]:

Չարենցը գունավորումը համարում է իր գործածած գեղարվեստական հնարքների և հերոսների կերտման նորագույն եղանակներից մեկը. «Ես փորձեցի պատկերել նաիրյան այդ քաղաքն իր բոլոր հին ու նոր հրաշալիքներով, ջանացի ցույց տալ բնակիչների կենցաղը, կամ ավելի լավ է ասել՝ կենցաղային կոլորիտը, ընդհանուր գույնը միայն և ոչ թե մանրամասն», կամ՝ «Ես ձգտեցի պատկերել կենցաղային այն բնույթը, երանգը, որ ուներ նաիրյան այդ քաղաքը» [7, էջ 56]:

Մակդիրը՝ որպես գեղարվեստական պատկերավորման միջոց, որոշակիորեն գաղափարական-բովանդակային «ծանրաբեռնվածության» կրող է, որն արտահայտում է հասարակական-քաղաքական հարաբերություններ, կերպարի արտաքին ու ներքին բնութագրումներ, ապրումներ, անցյալ ու ներկա ժամանակներ: Եղիշե Չարենցը մակդիրների գործածության միջոցով նկարագրում է նաև հերոսների արտաքին տեսքը՝ հաղորդելով դրանց ավելի շատ հոգեբանական նուրբ երանգներ: «Երկիր Նաիրի» վեպի մասին Հրանտ Թամրազյանը գրում է. «Հեղինակային խոսքը, ընդունելով բազում երանգավորումներ, ոճական և հոգեբանական թռիչքներով նպաստում է բազմերանգ նյութի ներքին կառուցմանը... Այս ամենի հետ միասին վեպի մեջ արգասավորվում են հատկապես նրբերանգի ու նրբագծի ուժը, ոճական նուրբ երանգավորումները, որոնք իրենց

հետ բերում են կենսական արձագանքներ, վեպը ավիշավորվում բազում լիցքերով և դիտողական անվերջ գյուտերով» [3, էջ 273]:

Ինչ վերաբերում է «Ուղղիչ տնից» ստեղծագործությանը, ապա նրանում նկատելի են սևի և թուխի գերակշռությունը, որոնք մեծ մասամբ մարդկանց դեմքն ու արտաքինն են նկարագրում, բայց ընդհանուր երանգավորում են տալիս մարդկանց հոգուն, ներաշխարհին, շրջապատին:

Ուղղիչ տան պատերի ներսում, ուր ես սպասում էի տեսնել գորշ պատեր ու մռայլ ամպայություն, - այստեղ այդ փոքրիկ ծաղկանոցը թողեց ինձ վրա անասելի պայծառ տպավորություն [7, էջ 205]:

Գույներն արտացոլում են նրա մտքերը, խոհերն ու երազանքները: Նրա երազած հայրենիքն ու երազած կանայք եթերային կապույտ են, երազած ծննդավայրը՝ ոսկի Իրան, ծննդավայրի կարոտը փարատող Գյումրին՝ գորշ ու դեղին, ներկա հայրենիքը՝ կարմիր քուրա:

Միննույն գունային մակդիրի տարբեր գործածությունները տարածված են թե՛ չափածոյում, թե՛ արձակում: Սա խոսում է գրողի հոյակապ վարպետության ու տեխնիկայի, մայրենի լեզվի ամբողջ հարստության, վերջինիս նպատակային գործածության մասին: Գունային մակդիրների տարբեր հոմանշային կիրառությունները նկատելի են թե՛ արձակում, թե՛ չափածոյում: Հոմանիշների ոճական հարուստ հնարավորություններն այս դեպքում կիրառվում են այն նպատակով, որ հասկացությունն արտահայտվի իմաստային նրբերանգներով, բառի ընտրությունը լիովին ներդաշնակի ոճական ուղղվածությանը, իսկ չափածոյում՝ նաև արտահայտության կատարյալ բանաստեղծականությանը:

Չարենցի խոսքում, հատկապես «Երկիր Նաիրի» վեպում, պոեմներում, «Ողջակիզվող կրակ» շարքում, նկատվում է հոմանիշ մակդիրների համատեղ օգտագործումը՝ ոճական և իմաստային բազմազան դրսևորումներ Բազմակի գունային մակդիրների կիրառությամբ Չարենցն ամբողջացնում է նկարագրվող առարկայի ողջ էությունը: «Երևանի ուղղիչ տնից» արձակ գործը մակդիրների գործածության իր ծավալով գրեթե չի զիջում չափածոյում դիտարկված նույն գործածությանը:

Չարենցի խոսքում գործածվող հարադիր բարդությունների տեսքով գունային մակդիրները տարածված են գեղարվեստական արձակում, դրանք կան նաև Չարենցի օրագրում: Չարենցը թե՛ արձակում, թե՛ չափածոյում գործածում է այնպիսի մակդիրային կազմություններ, որոնք բառօգտագործման բարձր ճաշակի վկայությունն են, բխում են հայերենի բառակազմական հնարավորություններից: Այդպիսին են կարմրակեզ, ոսկեդեմ, ոսկման, կարմրավառ և այլ բազմաթիվ մակդիրները «Չարենց-նամե», «Ութնյակներ արևին», «Հարդագողի ճամփորդները» գործերում, պղնձագույն, մետաղագույն, դեղնափայլ, սևասև մակդիրները՝ գեղարվեստական արձակում:

Անգամ մի երանգով Չարենցը մարմին ու շունչ է տալիս իր տարօրինակ հերոսներին: Նա գույների այնպիսի ընտրություն է կատարում, այնքան ճշգրիտ ու նպատակահարմար համադրություններ է ստեղծում, որ բառը վերաճում է բառ-կերպարի, բառ-բնութագրության, բառ-զգացմունքի:

**ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ.** Հոդվածը նվիրված է Եղիշե Չարենցի ստեղծագործության մեջ հետաքրքրական թեմաներից մեկին՝ գեղարվեստական պատկերավորման միջոցի՝ մակդիրի բացահայտմանը, որը բանաստեղծը արտահայտել է գրական ինքնատիպ եղանակներով, հասարակական կյանքը բնութագրող եզակի խորհրդանիշներով: Եղիշե Չարենցն իր պատկերած գունային մակդիրների բազմազանության միջոցով հարստացրեց գեղարվեստական արձակ խոսքը: Գույնով բնորոշող առարկայի կամ երևույթի առանձնահատկությունը շատ դեպքերում դառնում է բանաստեղծի հույզերի և ընդհանուր տրամադրության արտահայտման միջոց՝ արտացոլելով երևույթների ներքին կողմը:

Եղիշե Չարենցը գեղարվեստական խոսքի մեջ մտցրեց նոր արտահայտություններ, մակդիրային նոր կապակցություններ, որոնք ինքնատիպություն են հաղորդում չարենցյան արձակին: Ոճական հնարանքների այսպիսի բազմազանությունն ու լեզվական բարձր արվեստը խոր հետք են թողել հայ նոր գրական լեզվի զարգացման հետագա ընթացքի վրա:

### **Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն**

1. **Աղաբաբյան Ս.** *Գրական հերկերում:* Երևան: «Հայաստան» 1974: 316 էջ:
2. **Գասպարյան Գ.** *Ողբերգական Չարենցը:* Երևան: «Նաիրի» հրատ.: 1990: 384 էջ:
3. **Թամրազյան Հ. Ե.** *Չարենց:* Երևան: «Արևիկ» հրատ.: 1987: 480 էջ:
4. **Հարությունյան Հ.** *Գեղարվեստական խոսք:* Երևան: «Սովետական գրող» հրատ.: 1986: 288 էջ:
5. **Մարության Ա.** *Չարենցի չափածոյի լեզուն և ոճը:* Երևան: «Սովետական գրող» հրատ.: 1979: 196 էջ:
6. **Մելքոնյան Ս.** *Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության:* Երևան: «Լույս» հրատ.: 1984: 248 էջ:
7. **Չարենց Ե.** *Երկերի ժողովածու: Հատոր 4:* Երևան: «Սովետական գրող» հրատ. 1987: 368 էջ:
8. **Պողոսյան Պ.** *Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ 2:* ԵՀ հրատ.: Երևան: 1991: 424 էջ:
9. **Ջրբաշյան Էղ.** *Գրականության տեսություն:* Երևան: ԵՀ հրատ.: 1980: 496 էջ:
10. **Սևակ Պ.** *Երկերի ժողովածու: Հ. 5:* Երևան: «Հայաստան» հրատ.: 1974: 413 էջ:

### **R e f e r e n c e s**

1. **Aghababyan S.** Literary Pplowing. Yerevan. "Armenia". 1974. 316 p.. (in Armenian)
2. **Gasparyan D.** Tragic Charents. Yerevan "Nairi" 1990. 384 p.. (in Armenian)
3. **Tamrazyan H.** E.Charents. Yerevan: "Arevik". 1987. 480 p.. (in Armenian)
4. **Harutyunyan H.** Artistic speech. Yerevan. "Soviet writer". 1986. 288 p.. (in Armenian)
5. **Marutyan A.** Language and style of Charents verse. Yerevan. "Soviet writer". 1979. 196 p. (in Armenian)
6. **Melkonyan S.** Hints of Armenian language stylistics. Yerevan. "Luys": 1984. 248 p.. (in Armenian)
7. **Collection of Charents.** V. 4. Yerevan. "Soviet writer." 1987. 368 p.. (in Armenian)
8. **Poghosyan P.** Fundamentals of Speech Culture and Stylistics 2. YU newspaper.:Yerevan.1991. 424p . (in Armenian)
9. **Jrbashyan Ed.** Theory of Literature. Yerevan. YU newspaper.1980. 496p..(in Armenian)
10. **Sevak P.** Collection of countries.V.5.Yerevan."Armenia". 1974: 413p..(in Armenian)



Ընդունվել է / Принята / Received on: **26. 08. 2024**  
Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **28. 09. 2024**  
Հանձնվել է սույ. / Сдана в пч. / Accepted for Pub: **12. 12. 2024**

**Տեղեկություններ հեղինակի մասին**

**Գայանե Հովհաննեսի ԱՎԵՏԻՍՅԱՆ**՝ մանկ. գիտ. թեկնածու,  
Շիրակի պետհամալսարանի գրադարանի վարիչ, Գյումրի, ՀՀ  
Էլ. հասցե՝ gayaneavetisyan2@gmail.com

**Gayane Hovhannes AVETISYAN**: PhD in Pedagogy,  
Head of the library of Shirak State University, Gyumri, RA,  
e-mail gayaneavetisyan2@gmail.com

**Гаяне Оганесовна АВETИСЯН**: канд. педагог. наук  
Зав. библиотекой Ширакского госуниверситета, Гюмри, РА,  
эл. адрес: gayaneavetisyan2@gmail.com